

ԽՈՐՀՐԴԱՐԱՆ

ՄԵԿՆԱՐԿԵՑ ՕՐԵՆՍԴԻՐ ՄԱՐՄՆԻ ԱՇՆԱՆԱՅԻՆ ՆԱՏԱՇՐՋԱՆԸ

Սեպտեմբերի 5-ին աշխատանքն սկսեց Վրաստանի խորհրդարանի աշնանային նստաշրջանը:

Լիագումար նիստը մեկնարկեց օգոստոսի 3-ին Շոփի հանգստավայրում սեղանակառուցի հետևանքով զոհված 31 եւ անհետ կորած երկու անձանց հիշատակի՝ մեկ րոպե լռությամբ:

Խորհրդարանի նախագահ Շավա Պապուաշվիլին եւս մեկ անգամ ցավով նշեց հաճախ դրախտավայր անվանվող Շոփի անդամակալ կորուստը՝ մարդկային զոհերը, այդ թվում՝ ընտանեկան ողբերգությունները:

- Ցանկանում եմ եւս մեկ անգամ իմ ցավակցությունը հայտնել զոհվածների ընտանիքներին, այստեղ խոսքերը, հավանաբար, ավելորդ են,- ասաց Շավա Պապուաշվիլին:



պուաշվիլին: Խորհրդարանական խմբակցությունների ներկայացուցիչների քաղաքական հայտարարությունները հետո, խորհրդարանը ձեռնամուխ եղավ օրակարգով սահմանված հարցերի քննարկմանը:

Մասնավորապես, Վրաստանի խորհրդարանն առաջին ընթերցմամբ չաջակցեց ընդդիմացող սահմանված հարցերի քննարկմանը: Մասնավորապես, Վրաստանի խորհրդարանն առաջին ընթերցմամբ չաջակցեց ընդդիմացող սահմանված հարցերի քննարկմանը: (Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ԵՎՐԱՆՏԵԳՐՈՒՄ

ՋՈՋԵՑ ԲՈՐԵԼ. «ԵՎՐՈՊԱՆ ԵՐԲԵՔ ՎՐԱՍՏԱՆԻՆ ԶԻ ԼՔԻ»

Սեպտեմբերի 7-8-ը, պաշտոնական այցով, Վրաստանում էր գտնվում Եվրամիության արտաքին քաղաքականության եւ անվտանգության հարցերով բարձր ներկայացուցիչ, Եվրահանձնաժողովի փոխնախագահ ՋոՋեՑ Բորելը: Այցի շրջանակներում, Եվրամիության բարձրագույն ներկայացուցիչը հանդիպումներ ունեցավ Վրաստանի վարչապետ Իրակլի Դարիբաշվիլու, նախագահ Սալոմե Ջուրաբիշվիլու, խորհրդարանի նախագահ Շավա Պապուաշվիլու, արտաքին գործերի նախարար Իլիա Դարչիաշվիլու, խորհրդարանական ընդդիմության, ինչպես նաեւ ոչ կառավարական կազմակերպությունների ներկայացուցիչների հետ, այցելեց Ցխինվալիի տարածաշրջանի դիմակայության գոտի:



(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

Հանդիպումներին կողմերը քննարկեցին Վրաստանի կողմից Եվրամիության անդամակցության թեկնածուի կարգավիճակի ստացման համար Եվրահանձնաժողովի 12 հանձնարարականների կատարման ընթացքը, Վրաստանի կողմից Եվրամիության

ԴԻՐՔՐՈՐՈՇՈՒՄ

ՍԱՐՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԿՈՊԻՏ ԽԱԽՏՄԱՆ ՄԵՂԱԴՐԱՆՔ ԵՐԿՐԻ ՆԱԽԱԳԱՐԻՆ

Ինչպես արդեն հաղորդել ենք, Վրաստանի կառավարությունը մերժել էր Վրաստանի նախագահ Սալոմե Ջուրաբիշվիլուն՝ երկրի եվրաինտեգրմանն աջակցող եվրոպական շրջազայությունը: Բայց նախագահը, անտեսելով մերժումը, մեկնել էր Գերմանիա, Բրյուսել եւ Ֆրանսիա, հանդիպումներ ունեցել գործընկերների հետ: Մասնավորապես, Սալոմե Ջուրաբիշվիլին Բեռլինում հանդիպել էր Գերմանիայի կանցլեր Օլոֆ Շոլցի, Բրյուսելում՝ Եվրոպական խորհրդի նախագահ Շառլ Միշելի, Փարիզում՝ Ֆրանսիայի նախագահ Էմանուել Մակրոնի հետ:

«ԻՐԱԿԻ ԳԱՐԻԲԱՇՎԻԼԻ. «ՆԱԽԱԳԱՐԻ ԻՄՓԻՉՄԵՆՏԻ ՈՐՈՇՈՒՄԸ ԼԻՈՎԻՆ ԱՐԴԱՐԱՑՎԱԾ Է»



Սեպտեմբերի 4-ին, Վրաստանի վարչապետ Իրակլի Դարիբաշվիլին, կառավարության նիստում անդրադարձավ նախագահի իմփիչմենտի թեմային՝ նշելով, որ ցավոք, տիկին նախագահը հաշվի չառավ կառավարության կողմից ուղարկված մերժումը եւ ցուցադրաբար խախտեց սահմանադրությունը:

- Մոտ մեկ ամիս առաջ ես պաշտոնական մերժում էի ուղարկել այս այցելությունների հետ կապված, կցանկանայի նշել պատճառը: Մի քանի ամիս առաջ նախագահը բացահայտ շեշտել էր, որ Վրաստանի կառավարությունը չի կատարում իր պարտավորությունները, իսկ ամենամահանգստացնողն այն էր, որ Վրաստանն անցյալ տարի արժանի չէր թեկնածուի կարգավիճակին: Սա արդեն իսկ մեր վստահությունը կորցնելու նախապայմանն էր: Ուստի, որքանով ճիշտ

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՎՐԱՍՏԱՆ - ՀԱՅԱՍՏԱՆ

ՇԵՆԱԽՈՍԱԶՐՈՒՅՑ՝ ԻՐԱԿԻ ԳԱՐԻԲԱՇՎԻԼԻ ԵՎ ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆԻ ՄԻՋԵՎ

Սեպտեմբերի 8-ին կայացավ Վրաստանի վարչապետ Իրակլի Դարիբաշվիլու եւ Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանի հեռախոսազրույցը: Զրուցակիցները քննարկեցին տարածաշրջանում առկա իրավիճակին վերաբերող հարցեր:



Անդրադարձ կատարվեց Լաչինի միջանցքի ապօրինի արգելափակման, Հայաստան-Ադրբեջան պետական սահմանին առաջացած լարվածության աճին:



Նիկոլ Փաշինյանն ընդգծեց այդ հարցով ձեռք բերած պայմանավորվածություններին հավատարմությունը, ինչպես նաեւ բոլոր հարցերը բացառապես դիվանագիտական եղանակներով ու կառուցողական մթնոլորտում լուծելու մոտեցումները:

Վրաստանի վարչապետը հայտնեց, որ պատրաստ է ներդնել անհրաժեշտ ջանքեր՝ ի նպաստ տարածաշրջանում խաղաղության եւ կայունության հաստատման:

Երկուստեք կարելի էր ասել խաղաղ բանակցային ճանապարհով առկա հիմնախնդիրների կարգավորումը:

Նիկոլ Փաշինյանը վերահաստատեց, որ պատրաստակամ է հրատապ քննարկումներ ունենալ Ադրբեջանի նախագահի հետ:

ՎԱԽԹԱՆԳ ԳՈՍԵԼՈՒՐԻՆ ԵՎ ԻՐԱԿԻ ՇՈՐԱՅԵՆ ՎԱՆԴԻՊԵՅԻՆ ՎԱՅԱՍՏԱՆԻ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՐԻՆ

Սեպտեմբերի 6-7-ը, պաշտոնական այցով, Թբիլիսիում էր գտնվում Հայաստանի քննչական կոմիտեի նախագահ Արգիշտի Քյարամյանը:

Այցի շրջանակներում, հայաստանցի հյուրը հանդիպումներ ունեցավ Վրաստանի ներքին գործերի նախարար, Ազգային անվտանգության խորհրդի քարտուղար Վախթանգ Գոմեշաուրիի, Վրաստանի գլխավոր դատախազ Իրակլի Շոթաձեի, Հատուկ քննչական ծառայության ղեկավար Կոկա Կացիտաձեի հետ:

Հանդիպումներին կարելի էր ասել Վրաստանի եւ Հայաստանի միջեւ իրավապահ ոլորտում ծեւավորված արդյունավետ եւ փոխ-

շահավետ համագործակցությունը եւ ընդգծվեց միջգերատեսչական ամուր կապերի նշանակությունը՝ միջպետական հարաբերությունների կայուն զարգացման, երկու երկրներում օրինականության պահպանման, քաղաքացիների անվտանգության եւ իրավունքների պաշտպանության տեսանկյունից:

Հանդիպումներին մասնակցեց Վրաստանում Հայաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան Աշոտ Սմբատյանը:

ՍԱԼՈՍԵ ԶՈՒՐԱԲԵՇՎԻԼԻ. «ՄԻԱԼ Է, ԵՐԲ ՆԱԽԱԳԱՐԸ ԻՐ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ Է ՄԵԿՆՈՒՄ ԱՐՏԱՍԱՐՄԱՆՅԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԻ»

Եվրոպական երկրներ իր շրջայցի շուրջ ծավալված իրադարձությունների կապակցությամբ, Վրաստանի նախագահ Սալոմե Ջուրաբիշվիլին սեպտեմբերի 7-ին հանդես եկավ քաղաքացիներին ուղղված հեռուստաուղերձով:

ՍԱԼՈՍԵ ԶՈՒՐԱԲԵՇՎԻԼԻ. «ՄԻԱԼ Է, ԵՐԲ ՆԱԽԱԳԱՐԸ ԻՐ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ Է ՄԵԿՆՈՒՄ ԱՐՏԱՍԱՐՄԱՆՅԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԻ»

Նախագահի խոսքով, իրեն հարգանքով են ընդունում, քանի որ ներկայացնում է այն մարդկանց, ովքեր ցույց են տվել, թե որքան կարեւոր է եվրոպական հեռանկարը: - Եթե դուք դուրս չգայիք եւ ամբողջ եվրոպային ցույց չտայիք, թե որքան կարեւոր է այս հեռանկարը, ես նման վստահություն չէի ունենա տարբեր առաջնորդների հետ հանդիպելիս,- ասաց նախագահը ու հավելեց, որ եվրոպացի գործընկերները գիտեն, որ ինքը ժողովրդի կողմից է ընտրված, եւ դա է

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ԽՈՐՀՐԴԱՐԱՆ

ՄԵԿՆԱՐԿԵՑ ՕՐԵՆՍԴԻՐ ՄԱՐՄԻ ԱՇՆԱՆԱՅԻՆ ՆԱՏԱՇՐՋԱՆԸ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

դիր պատգամավոր թեման Ակուբարդիայի օրենսդրական նախաձեռնությանը՝ երկրում ֆաշիզմի դեմ տարած հաղթանակի օրը մայիսի 9-ից 8-ը տեղափոխելու վերաբերյալ:

Խորհրդարանի ընթացակարգային հարցերի եւ կանոնակարգի կոմիտեի նախագահ Իրակլի Քաղապաշվիլին լիազուրկում ներկայացրեց երկու պատգամավորների՝ Քեթևան Դումբաձեի եւ

Դավիթ Սերգենյուկի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին որոշման նախագծերը:

Նրա խոսքով, Քեթևան Դումբաձեի Գրողների տան տնօրենի պաշտոնում նշանակվել է սեպտեմբերի 4-ից, ինչն անհամատեղելի է խորհրդարանի անդամի կարգավիճակի հետ, իսկ Դավիթ Սերգենյուկի լիազորությունների դադարեցման պատճառը եղել է նրա բացակայությունը խորհրդարանի նիստերից՝ անհարգելի պատճառով: Ընթացակարգային հար-

ցերի եւ կանոնակարգի կոմիտեի նախագահի խոսքով՝ զարմանալիս նստաշրջանի 32 նիստ է կայացել, որոնցից 25-ին Դավիթ Սերգենյուկը չի մասնակցել:

Խորհրդարանի քվեարկության արդյունքներով, Քեթևան Դումբաձեի պատգամավորական լիազորությունները դադարեցվել են, սակայն Դավիթ Սերգենյուկի լիազորությունների դադարեցման հարցի քվեարկությանը միայն երկու պատգամավոր արտահայտվեցին կողմ, իսկ 12-ը՝ դեմ:



ԵՎՐՈՊԱ

ՅԵՂԵՂՈՒՄՆԵՐ՝ ՄԱՐԿԱՅԻՆ ՋՈՂԵՐՈՎ

Թուրքիայում, Գոնաստանում եւ Բուլղարիայում հզոր տեղատարափների զոհերի թիվը հասել է 14-ի: Իրար սահմանակից այս երեք երկրներում փրկարարները շարունակում են որոնողական աշխատանքները եւ հեղեղումների հետեւանքների դեմ պայքարը:

Թուրքիայի հյուսիս-արեւմուտքում՝ Բուլղարիայի հետ սահմանի մոտ, հեղեղումներն առնվազն 5 մարդու կյանք են խլել: Եվս 2 մարդ զոհվել է Ստամբուլում, ավելի քան 30-ը՝ վնասվածքներ ստացել: Ստամբուլի մի քանի շրջաններում փոթորկի ժամանակ ջրածածկ է եղել ավելի քան 1750 տուն եւ ձեռնարկություն: Ստորոյի մի քանի կայարաններ ժամանակավորապես փակ են:

Գոնաստանում ռեկորդային ուժեղ եւ երկարատեւ տեղատարափները հանգեցրել են 2 մարդու մահվան: Փրկարարները նրանց մարմինները հայտնաբերել են Վոլոս եւ Կարդիցա քաղաքների մերձակայքում: Եվս 3 մարդ համարվում է անհետ կորած:

Բուլղարիայում հեղեղումներն սկսվել են Սեւ ծովի հարավային ափին: Իշխանությունները հայտնել են 4 զոհի մասին: Յեղեղված տարածաշրջանի գետերի մեծ մասը դուրս է եկել ափերից եւ քշել-տարել մի քանի կամուրջներ:

Օդերեսուբաքանների տվյալներով՝ Բուլղարիայում օրական տեղումների քանակը երեք անգամ գերազանցել է ամսական նորման:

ՌՈՒՍԱՍՏԱՆ-ԹՈՒՐԻՔԱ ՊՈՒՏԻՆ-ԵՐՊՈՂԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ ԿՈՆԿՐԵՏ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԶԳՆԱԳԵՑՐԵՑ

Սեպտեմբերի 4-ին Սոչիում անցկացվեց Ռուսաստանի եւ Թուրքիայի նախագահներ Վլադիմիր Պուտինի եւ Ռեջեփ Թայիփ Էրդողանի առանձնագրույցը, որին հաջորդեցին ընդլայնված կազմով ռուս-թուրքական բանակցությունները:

Հանդիպման ամենասպասված թեմաներից մեկը «հասցահատիկի գործարքի» ապագան էր: Պուտինի խոսքով, նախորդ պայմանագրով ստանձնած պարտավորությունների կատարման դեպքում (խոսքը վերաբերում է Ռուսաստանի ֆինանսների ձերբազատման, միջազգային ֆինանսական կազմակերպությունների հետ կապի հաստատման, ռուսական ագրոմթերքների արտահանման վրա դրված արգելքի վերացմանը եւ այլն) Ռուսաստանը բաց է հացահատիկի գործարքի շուրջ բանակցությունների համար:

Կողմերը քննարկել են նաեւ Թուրքիայում գազային հանգույց ստեղծելու հարցը:

ԵՎՐԱՆՏԵԳՐՈՒՄ

ՋՈՋԵՖ ԲՈՐԵԼ. «ԵՎՐՈՊԱՆ ԵՐԲԵՔ ՎՐԱՍՏԱՆԻՆ ԳԻ ԼՔԻ»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

անդամակցության հեռանկարները, երկրի տարբեր ոլորտներում իրականացվող բարեփոխումները եւ այլ հարցեր:

- Ես արդյունավետ հանդիպում ունեցա ԵՄ բարձր ներկայացուցիչ Ջոզեֆ Բորելի հետ: Մենք քննարկել ենք Վրաստանի ձեռքբերումները եվրահիմնագրման ճանապարհին եւ

մեր հաջողությունները 12 առաջնահերթությունների իրականացման գործում: Ի պատասխան մեր նշանակալի առաջընթացի՝ մենք ակնկալում ենք այս տարի ստանալ եվրամիության թեկնածու երկրի կարգավիճակ: Վրաստանը եվրոպա է, հայտարարեց Իրակլի Դարիբաշվիլին համատեղ մամլո ասուլիսում:

- Երբեք չասեք, որ եվրա-

միությունը կլքի Վրաստանը: Մեր գնահատականը օբյեկտիվ է: Եվրամիությունը չի լքում Վրաստանը, չի հրաժարվի նրանից: Մենք ունենք տնտեսական եւ ներդրումային ծրագիր, որտեղ մոբիլիզացվել է 1,3 միլիարդ եվրո, եւ այն կօգտագործվի Վրաստանում մրցունակության եւ ենթակառուցվածքների բարելավման համար: Մենք Վրաստանի հետ

ծրագրեր ունենք: Մենք հասկանում ենք ամեն ինչ, այն շահերը, որոնք կապված են Վրաստանի հետ, հետեւաբար Վրաստանը մեր շահի հետ է կապված: Մենք ցանկանում ենք, որ դուք լինեք եվրամիության անդամ: Աշխատանք կա անելու, եւ դրա համար ժամանակ կա, գործք: Մի մտածեք կառույցը լքելու մասին, - ասաց Ջոզեֆ Բորելը:

ԱՇՆԱՆԱՅԻՆ ԶԱՆԴԻՊՈՒՄ

ՎՐԱՍՏԱՆԻ ՆԳ ՆԱԽԱՐԱՐԸ՝ ՔԿԵՄՈ ՔԱՐԹԼԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՈՒՄ

Վրաստանի ներքին գործերի նախարար Վախթանգ Գոմելաուրին՝ Ռուսթավիլիում աշխատանքային հանդիպում ունեցավ Քվեմո Քարթլիի տարածաշրջանի ոստիկանության ղեկավարման տնօրենի ղեկավարների հետ:

Հանդիպմանը մասնակցեց նաեւ ՆԳ նախարարի առաջին տեղակալ Շավվա Բեդոիձե:

Տարածաշրջանային ոստիկանության ղեկավարման տնօրենի աշխատակիցները՝ նախարարին մանրամասն տեղեկատվություն ներկայացրին հանցագործությունների դեմ պայքարի եւ իրավաստիպում-

ների կանխման ուղղությամբ իրականացված միջոցառումների մասին:

Աշխատանքային հանդիպմանը քննարկվեցին նաեւ գերատեսչության գործունեության առաջնահերթային ուղղությունները, ըստ որի՝ նախարարը կոնկրետ հանձնարարություններ տվեց:



ԴԻՐՔՐՈՐՈՇՈՒՄ

ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ԿՈՊԻՏ ԽԱՍՏՄԱՆ ՄԵՂԱՐԱՆՔ ՆԱԽԱԳԱՅԻՆ

«ԻՐԱՎԻ ԳՐԻԲԱՇՎԻՒԻ. «ՆԱԽԱԳԱՅԻ ԻՄՓԻԶՄԵՆՏԻ ՈՐՈՇՈՒՄԸ ԼԻՈՎԻՆ ԱՐԴԱՐԱՑՎԱԾ Է»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Կլիներ նրան որոշ լիազորություններ փոխանցել: Ափսոս, որ Վրաստանի նախագահը ցուցադրաբար խախտում է օրենքը: Ուստի իշխող կուսակցության ընդունած որոշումը արդարացված է, - ասաց Իրակլի Դարիբաշվիլին եւ հավելեց, որ երկրի սահմանադրությունը արտաքին քաղաքականության վարումը վերապահում է միայն Վրաստանի կառավարության եւ վերջինիս լիազորությունների շնորհման դեպքում միայն, նախագահը կարող է ստանձնել դրանք:

ՍԱՆՍԵ ԶՈՒՐԱԲԵՇՎԻՒ. «ՍԻԱԼ Է, ԵՐԲ ՆԱԽԱԳԱՅԸ ԻՐ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ Է ՄԵԿՆՈՒՄ ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԻ»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

պատճառը, որ իրեն հարգանքով են դիմավորում: Ըստ նախագահի՝ սա ոչ թե իր վաստակն է, այլ՝ ժողովրդի:

- Ես հպարտ եմ, որ ձեզ եմ ներկայացնում եվրոպական տարբեր մայրաքաղաքներում... Ես ապավինում եմ ձեզ, իսկ դուք՝ ինձ, մենք միասին կգնանք ու կհասնենք վերջնակետին, - հայտարարեց Սալոմե Զուրաբիշվիլին եւ հավելեց, որ եվրոպական երկրների ղեկավարների հետ հանդիպելու համար օգտագործել է սեփական ֆինանսական միջոցները, ինչը պետականորեն ճիշտ չէ:

ԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏ

ԹԵՆ ԱՆՎԵՂԻԱՆԻ. «ԻՆՏԵԳՐՄԱՆ 10-ԱՄՅԱ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ՓՈՒԼԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՆ ԱՎԵԼԻ ՔԱՆ ԲԱՎԱՐԱՐ ԵՆ»

Սեպտեմբերի 7-ին, Վրաստանի հաշտեցման եւ քաղաքացիական իրավահավասարության պետական նախարար Թեա Ավալեղիանու նախագահությամբ, անցկացվեց կառավարական հանձնաժողովի նիստ, որին ներկա էին քաղաքացիական իրավահավասարության եւ ինտեգրման պետական քաղաքականության իրականացման համար պատասխանատու գերատեսչությունների ղեկավար անձինք:

Նիստին պետնախարարը խոսեց քաղաքացիական իրավահավասարության եւ ինտեգրման քաղաքականության առաջնահերթությունների մասին, ներկայացրեց ռազմավարության իրականացման դիմամիկան, հանրագումարեց «Քաղաքացիական իրավահավասարության եւ ինտեգրման 2021-2030 թվականների պետական ռազմավարության» 2022 թվականի գործողությունների ծրագրի կատարման արդյունքները, նաեւ 2023 թվականի առաջին վեց ամիսներին իրականացված գործունեությունը:

Թեա Ավալեղիանին առանձնակի ընդգծեց կառավարական հանձնաժողովի անդամ գերատեսչությունների համաձայնեցված ու համակարգված գործունեությունը,

ինչը վճռական նշանակություն ունի առաջիկա ծրագրերի համատեղ կատարելագործման ու ռազմավարական նպատակներին արդյունավետորեն հասնելու տեսանկյունից:

- Այսօր մենք գնահատեցինք քաղաքացիական իրավահավասարության եւ ինտեգրման 10-ամյա պետական ռազմավարության գործունեության ծրագրի առաջին փուլի շրջանակներում կատարած աշխատանքների արդյունքները: Անցկացրինք բավական հետաքրքիր ու առարկայական քննարկում այդ քաղաքականության իրականացման մեջ ներգրավված պետական գերատեսչությունների մասնակցությամբ, ովքեր, իրենց իրա-



վատության շրջանակներում ստանձնած պարտավորություն (Շարունակությունը՝ 4-րդ էջում)

Շաբաթից շաբաթ. Փաստեր եւ իրադարձություններ

ՀԱՂՈՐԳՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

ԳՈՐԾԱԴԻՐ

ԻՐԱԿԻ ՂԱՐԻՔԱՇՎԻԼԻ. «ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲԱՐՁՐ ԱՃԸ ԿՊԱՅՄԱՆԱԿՈՐԻ ԲՅՈՒՋԵԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ»

Սեպտեմբերի 4-ին, Վրաստանի վարչապետ Իրակլի Դարիբաշվիլու նախագահությամբ, անցկացվեց երկրի կառավարության հերթական նիստը, որի մեկնարկին վարչապետը հանրագումարեց տարվա անցած ժամանակահատվածում էկոնոմիկայի ոլորտում առկա տեղաշարժերը:



Ինչպես նշեց Իրակլի Դարիբաշվիլին, անցած ժամանակահատվածում, բարձր տնտեսական աճի պատճառով, բյուջեում կկատարվեն փոփոխություններ, ինչը կդառնա հետաքրքիր նախաձեռնությունների ու ծավալային նախագծերի իրականացման նախադրյալ:

Վարչապետի խոսքով՝ նախատեսվում է սկսել այնպիսի խոշոր նախագծեր, ինչպիսիք են Անակլիա նավահանգստի նախագիծը, նոր օդանավակայանի նախագիծը եւ հիդրոէլեկտրակայանների կառուցումը:

- Քանի որ մենք ունենք բարձր տնտեսական աճ, ստիպված ենք լինելու ճշգրտել բյուջեն, երկրի համար ավելի շատ եկամուտներ կհավաքագրվեն: Այս մասին ավելի ուշ կանդադանք խորհրդարանին՝ վերանայված բյուջեի նախագծով: Նաեւ մենք արդեն սկսել ենք աշխատել 2024 թվականի նոր բյուջեի վրա: Հետաքրքիր նախաձեռնություններ կունենանք, կնախատեսվեն նոր նախագծեր: Նախատեսվում է սկսել մեծ



ՅՈՑ ԱՍՏՈՒՄ 7,2 ՏՈՎՈՍԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃ

Վրաստանի Ազգային վիճակագրական ծառայության նախնական գնահատականներով՝ 2023 թվականի հուլիսին, նախորդ տարվա համապատասխան ժամանակաշրջանի համեմատ, իրական համախառն ներքին արտադրանքի աճը կազմել է 5,5 տոկոս, իսկ 2023 թվականի առաջին յոթ ամիսների միջին աճը սահմանվել է 7,2 տոկոսով:

Ըստ Վիճակագրության ծառայության՝ 2023 թվականի հուլիսին, նախորդ տարվա համապատասխան ժամանակահատվածի համեմատ, աճին զգալիորեն նպաստել են այնպիսի ոլորտներ, ինչպիսիք են ֆինանսական եւ ապահովագրական գործունեությունը, շինարարությունը, առևտուրը, մասնագիտական, գիտատեխնիկական գործունեությունը:

Նվազման միտում է նկատվել վերանշակող եւ հանքարդյունաբերության, տեղեկատվության եւ կապի ոլորտներում:

«ԲԱՔՈՒ-ԹԲԻԼԻՍԻ-ԱԽԱԼՔԱԼԱՔԻ-ՂԱՐՍ» ԵՐԿԱՔԳԻԾԸ ԼՐԻՎՈՒԹՅԱՄԲ ԿՎԵՐԱՆՈՐՈՎՎԻ

Ինչպես հայտարարեց Թուրքիայի տրանսպորտի եւ ենթակառուցվածքի նախարար Աբդուլկադիր Ուրալողլունը, Բաքու-Թբիլիսի-Ախալքալաքի-Ղարս երկաթգիծը լրիվությամբ կվերանորոգվի:

Նախարարի խոսքով, մեկ գոտի, մեկ ճանապարհի նախաձեռնության իրականացման համար տրանսպորտային հաղորդակցության կարգավորումը նշանակալի է:

Նշենք, որ «Երկաթե մետաքսե ճանապարհը»՝ «Բաքու-Թբիլիսի-Ախալքալաքի-Ղարս» երկաթգիծը շահագործման հանձնվեց 2017 թվականի հոկտեմբերի 30-ին: Նախագծի շրջանակներում կառուցվեց Ախալքալաքի-Ղարս երկաթգծի 98 կիլոմետրանոց հատվածը, որից 30 կիլոմետրը Վրաստանում է: Իրականացվեց նաեւ Թբիլիսի-Ախալքալաքի երկաթուղային 183 կիլոմետրանոց հատվածի վերանորոգումը:

ԱՏՐԱՄԲՈՒՐԳԻ ԴԱՏԱՐԱՆԸ ԶԲԱՎԱՐԱՐԵՑ ՆԻՎԱ ՄԵԼԻԱՅԻ ՀԱՅՏԸ

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը հրապարակել է «Նիկա Մելիան ընդդեմ Վրաստանի» գործով որոշումը, որտեղ նշվում է, որ «Մելիան ընդդեմ Վրաստանի» գործով դատարանը գտել է, որ չկա ազատության, անվտանգության իրավունքի եւ իրավունքների սահմանափակման կիրառման շրջանակի խախտում:

Գործը կապված է 2019 թվականին ընդդիմադիր քաղաքական գործիչ Նիկա Մելիայի ձերբակալության եւ էլեկտրոնային ապարանջանի ամրացման հետ: Դատարանը հայցը ճանաչեց ընդունելի եւ որոշեց, որ Մարդու իրավունքների եվրոպական կոմիտեի 5-րդ հոդվածի առաջին պարբերության (ազատության եւ անձնական անվտանգության իրավունք) խախտում չկա:

ՏԱՐԱԴՐԱՄԻ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ԿՈՒՐՍԸ (9 սեպտեմբերի)

Ազգային բանկի կողմից սահմանվել է տարադրամի հետեւյալ կուրսը:

Table with 2 columns: Գումար (Amount) and Լարի (Lari). Rows include 1 ԱՄՆ ԴՈԼԱՐ (2.6251), 1 ԵՎՐՈ (2.8083), 100 ՌՈՒՐԼԻ (2.6833), 1000 ԴՐԱՄ (6.8008).

ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ

ԱԽԱԼՔԱԼԱՔԻՈՒՄ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԱՐՏԱԳՆԱ ՆԻՍՏԻՆ ՄԱՍՆԱԿՅԵՅԻՆ ԳԻՎԻ ՄԻՔԱՆԱԶԵՆ, ՍԱՄՎԵԼ ՄԱՆՈՒԿՅԱՆԸ, ՄԵԼՔՈՆ ՄԱԿԱՐՅԱՆԸ...

Վրաստանի խորհրդարանի կրթության եւ գիտության կոմիտեի նախագահ Գիվի Միքանաձեի գլխավորությամբ, Ախալքալաքիում անցկացվեց կոմիտեի արտագնա նիստ, որին, կոմիտեի անդամներից բացի, մասնակցեցին Ախալքալաքիից եւ Նինոծմինդայից Վրաստանի խորհրդարանի մեծամասնական պատգամավոր Սամվել Մանուկյանը եւ Ախալքալաքիի մունիցիպալիտետի քաղաքապետ Մելքոն Մակարյանը:



Ախալքալաքիում, արտագնա նիստի մասնակիցներն այցելեցին Թբիլիսիի պետական համալսարանի Ախալքալաքիի մասնաճյուղ, հանդիպում ունեցան ուսանողների, դասախոսա-պրոֆեսորական կազմի հետ:

ՏԱՐԵՐԸ

ՇՈՎԻԻ ՈՂԲԵՐԳՈՒԹՅՈՒՆԻՅ՝ ՀԵՏՈ ՏԵՂԱՏԱՐԱԾ ԱՆՁԻՎՆԵՐԸ ԳՈՒՐԻԱՅԻ ՏԱՐԱԾԱՆԵՐԶԱՆՈՒՄ ՀԱՆԳԵՅՐԵԼ ԵՆ ԱՎԵՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՄԱՐԴԿԱՅԻՆ ԶՈՂԵՐԻ

Արեւմտյան Վրաստանի Գուրիայի տարածաշրջանում, չդադարող տեղատարափների հետեւանքով, ավերվել է 10 բնակելի շենք, վնասվել են կամուրջներ ու ճանապարհներ: Զոհվել է երեք մարդ, անհետ կորած են համարվում չորսը:



Լանջիտուսի մունիցիպալիտետի քաղաքապետ Ալեքսանդր Սարիշվիլու խոսքով, սողանքներ են առաջացրել մի քանի գյուղերում: Հողադարող տեղատարափն առայժմ թույլ չի տալիս լիարժեք ձեռնամուխ լինել վերականգնողական աշխատանքներին եւ գնահատել տարերքի հասցրած վնասի չափը:

Վրաստանի ՆԳ նախարարության տեղեկատվության համաձայն, հայտնաբերվել է երեք դի, այդ թվում՝ երկու դեռահասների: Ներքին գործերի նախարարության արտակարգ իրավիճակների կառավարման ծառայության ղեկավար Թեմուր Մղբերիշվիլին շարունակում է մնալ աղետի գոտում եւ համակարգում է արտակարգ իրավիճակների շտաբը:

ՍԻՄՈՆ ԿԻԼԱՅԵ

ԶԳՈՒՇԱՑՈՒՄ

ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՄԸ ԹԱՔԵՎԵՂ Է. ԽՈՒՃԱՄՊ, ԹԵ՛ ԻՐԱԿԱՆ ՄՊԱՌՆԱԼԻՔ ՀԱՍԱՎԱՐԱԿԻՑ ՀԵՏՈ ԱՆՑԱԾ ԵՐԿՈՒ ՏԱՐԻՆԵՐԸ ԻՆՔԱՄԻՏԻԹԱՐԱՆՔԻ ՀԻՍՔ ԶԵՆ

Վերջերս Թբիլիսիի ինֆեկցիոն հիվանդանոցի տնօրեն Թեմգիզ Ցերցվածեի հայտարարությունը, որ Վրաստանում բացառված չէ տարածվի կորոնավիրուսի նոր EG-5 («էրիս») օմիկրոն-շտամը («Վրաստանը» այդ մասին հաղորդել է թերթի օգոստոսի 28-ի համարում), մտահոգություն առաջացրեց:

Ճիշտ է, կորոնավիրուսի նոր տարատեսակով վարակման լաբորատոր հաստատումներ չկան, սակայն որոշակի խուճապ առաջացավ: Պատճառը ակնհայտ է՝ ոչ ոք չի ցանկանում վտանգավոր համավարակի, դիմակների պարտադրման ու մեկուսացումների կրկնությունը:

Վրաստանի հիվանդությունների եւ հանրային առողջապահության ազգային կենտրոնը շտապեց հերքել COVID-19-ի նոր շտամի վերաբերյալ տարածած տեղեկատվությունը: Հատուկ հայտարարությամբ հանդես եկավ նաեւ Վրաստանի առողջապահության նախարար Զուրաբ Ազարաշվիլին, վստահեցնելով, որ կորոնավիրուսի վերադարձի ոչ մի հիմք չկա: Ճիշտ է, կորոնավիրուսի համավարակից հետո անցել է գրե-

թե երկու տարի, սակայն մասնագետները կրկին գտնում են, որ դա ինքնամիթոսարանքի հիմք չի կարող լինել: Վերջին ժամանակներում գիտական ուսումնասիրությունները ցույց են տվել, որ կորոնավիրուսի թեկուզ թեթեւ ձեւերով վարակված մարդկանց մոտ, երկու տարի անց էլ կարող են հայտնվել տարբեր հիվանդությունների զարգացման այստանդարտները՝ թոքերի բորբոքում, թուլություն, շաքարախտ եւ այլն: Միաժամանակ, մասնագետները զգուշացնում են, որ կորոնավիրուսի վարակման ավելի ծանր ախտորոշումով հիվանդացած ու բուժված անձինք, երկու տարի անց էլ առանձնակի ենթակա են առողջության համար վտանգավոր ախտերով հիվանդանալու ռիսկին:

ԱՐԵՎԻԿԱ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏ

ԹԵՄ ԱՆՎԵԴԻԱՆԻ. «ԻՆՏԵԳՐՄԱՆ 10-ԱՄՅԱ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ՓՈՒԼԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՆ ԱՎԵԼԻ ՔԱՆ ԲԱՎԱՐԱՐ ԵՆ»

(Ակիզբը՝ 2-րդ էջում)

թյուններին համապատասխան, նշանակալից ավանդ են ներդրում մեր բազմերանգ հասարակության ամրացման ու ինտեգրման գործընթացում: Քննարկեցինք ընթացիկ զարգացումներն ու առաջիկա հնարավորությունների հեռանկարները, ինչն է՛լ ավելի կնպաստի ծավալային եւ մատչելի արդյունքների ապահովմանը: Առանձնակի շեշտը դրվեց պետական լեզվի ինտեգրացիայի ամրապնդմանն ու լեզուների միջնակային գործող եւ առկա մե-

խանիզմների զարգացման նշանակու-թյան վրա, ինչը, ինտեգրման տեսանկյունից, առանձնակի նշանակալից է ազգային փոքրամասնություններով հոծաբնակ տարածաշրջանների համար,- հայտարարեց Թեմ Անվեդիանին:

Նշենք, որ քաղաքացիական իրավա-հավասարության եւ ինտեգրման կառու-վարական միտն անցկացվեց ՄԱԿ-ի զարգացման ծրագրի (UNDP) հետ հա-մագործակցությամբ եւ Նորվեգիայի ար-տաքին գործերի նախարարության աջակ-ցությամբ:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ԶԱԶԱ ԼՈՄԻՆԱԶԵ. «ԿՈՒՏԱԿՈՒՄԱՅԻՆ ԿԵՆՍԱԹՈՆՍԿԱՆԵՐԻՆ ՈՉԻՆՉ ԳԻ ՄՊԱՌՆՈՒՄ»



Ինչպես արդեն հաղորդել ենք, Կուտակումայի կեն-սաթոշակային համակարգում նախատեսված էին փոփո-խություններ: Համաձայն փոփոխությունների միջնեւ սեպ-տեմբերի 6-ը շահառուները պետք է ընտրություն կատա-րեին փոքր, միջին եւ բարձր ռիսկերի փաթեթում իրենց գումարների ներդրման հարցում: Բայց Վրաստանի խորհր-դարանը, հարցի առաջին իսկ քննարկումից հետո, հան-զեց այն որոշման, որ թեման դեռեւս լրիվությամբ մշակ-ված է, եւ շահառուները նվազ պատկերացում ունեն հա-մակարգի փոփոխությունների հարցում: Ուստի եւ կեն-

սաթոշակային սխեման եւ նորամուտությամբ պայմանավորված փոփոխությունները ուժի մեջ կմտնեն ոչ թե սեպտեմբերի 6-ից հետո, այլ 2028 թվականի հունվարից, իսկ մինչ այդ կենսաթոշակային բոլոր ներդրումները կմնան փոքր ռիսկային փաթեթում:

Ինչպես հայտարարեց Վրաստանի խորհրդարանի առողջապահության եւ սոցիալական հարցերի կոմիտեի նա-խագահ Ջազա Լոմինազեն՝ աշխատող մարդկանց համար Կուտակումային կենսաթոշակներին ոչինչ էլ սպառ-նում:

հառուներն իրենք էին ընտրելու ռիսկա-յին այն փաթեթը, որտեղ կցանկանային ներդնել իրենց խնայողությունները: Ընդ որում, գումարի փոխադրումը պարտա-դիր չէ, այն իրականացվում է կամավո-րական սկզբունքով: Եթե շահառուն ցան-կանում է օգտվել նորամուտությունից, նա դիմելու է ապահովագրական հիմ-նադրամին, եթե ոչ, ապա կենսաթոշա-կային գումարը, մինչեւ 2028 թվականի հունվարը, կմնա փոքր ռիսկի փաթեթում: Դրա երաշխավորը պետությունն է,- հայ-տարարեց Ջազա Լոմինազեն:

- Կուտակումներից բացարձակապես ոչինչ չի սպառնում: Կուտակումային կեն-սաթոշակը կշարունակի գործել նախկին սխեմայով, թեպետ, դեռեւս 2018 թվա-կանին ընդունված օրենքով, նախատես-ված էր 5-ամյա ժամկետ, որից հետո շա-

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ, ԱՎՏՈՏՐԱՆՄՊՈՐՏԻ ՍԵՓԱԿԱՆԱՏԵՐԵՐԻՆ

ՄԵՔԵՆԱՆԵՐԻՑ ԱՐՏԱՆԵՏՈՒՄՆԵՐԻ ԿԵՐԱՅԱԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԽՍՏԱՑՎԵՑ, ՏՈՒԳԱՆՔՆԵՐԸ ՄԵԾ ԵՆ

Սեպտեմբերի 4-ից ուժի մեջ մտան Վրաստանի «Վար-ջական իրավախախտումների» օրենսգրքում կատար-ված փոփոխությունները, ըստ որի՝ ճանապարհներին կի-րականացվի ավտոմոբիլային տրանսպորտային միջոց-ների տեսանելի արտանետումների վերահսկողությունը:



Հսկողությունը հատուկ սարքավորում-ներով իրականացվում է Բնապահպանու-թյան եւ գյուղատնտեսության նախարարու-թյան բնապահպանական վերահսկողության վարչության շարժական բրիգադների կող-մից՝ կառավարության որոշմամբ սահման-ված նորմերով ու կանոններով:

Խախտում հայտնաբերելու դեպքում՝ ֆի-զիկական անձը տուգանվում է առաջին ան-գամ 100 լարի, խախտումը կրկնելու դեպ-քում (նույն արարքը կատարվել է առաջին տուգանքից 15 օր հետո)՝ 300 լարի, խախ-տումը կրկնելու դեպքում, վերջին տուգան-քից 15 օր հետո՝ 600 լարի: Իրավաբանա-կան անձը առաջին անգամ տուգանվում է 500 լարի, երկրորդ խախտման համար՝ 1500 լարի, երրորդ խախտման դեպքում՝ 3000 լարի:

Արտանետումների վերահսկողությունից խուսափելը պատժվում է նույն պատժա-միջոցով: Եթե տուգանքը վճարվի 10 օրվա ընթացքում, ապա տուգանքի չափը կկր-ճատվի 20 տոկոսով:

«Անձը կազատվի վարչական պատաս-խանատվությունից, եթե, խախտումը հայտ-նաբերելուց հետո, երկու ժամվա ընթաց-

քում վա-րորդը, սե-փականա-տերը եւ/կամ տրանսպորտային միջոցի սե-փականատերը, իր միջոցներով հավատար-մագրված տեխնիկական կենտրոնում զննի մեքենան, եւ որոշվի, որ նշված մեքենայի արտանետումները համապատասխանում են սահմանված նորմերին: Ճանապարհնե-րին ավտոտրանսպորտային միջոցների ար-տանետումներում վնասակար նյութերի բա-ղադրության հսկողությունը կիրականաց-վի Վրաստանի չորս խոշոր քաղաքներում՝ Թբիլիսիում, Քութայսիում, Բաթումիում եւ Ռուսթավիում: Արդյունահանման եւ էկոտո-րային փոխադրումների աշխատանքային խմբի կողմից հաստատված առաջարկու-թյան հիման վրա՝ Բնապահպանության եւ գյուղատնտեսության նախարարությունը ներկայացրել է օրենսդրական նախաձեռ-նություն՝ հիմք ընդունելով Լոբբի վերահս-կողության իրավական միտն եւ էկոտորա-յին փոխադրումների հանձնաժողովի առա-ջարկությունը, որը հաստատվել է Վրաս-տանի խորհրդարանի կողմից»,- ասված է տեղեկատվության մեջ:

ԶՈՐՍ ՕՐՈՒՄ ԱՐԴԵՆ ԳՐԱՆՑՎԵԼ Ե ԱՐՏԱՆԵՏՈՒՄՆԵՐԻ ՆՈՐՄԵՐԻ 220 ԽԱՒՏՈՒՄ

Ընդամենը 4 օրում, ավտոտրանսպորտա-յին միջոցներից տեսանելի արտանետումնե-րի նորմերի վերահսկողության մասին վարչա-կան օրենքում կատարած փոփոխություննե-րի ուժի մեջ մտնելուց հետո, երկրի ողջ տարածքով գրանցվել է նորմերի խախտման 220 փաստ: Ընդ որում, դրանցից 160-ը ար-ձանագրվել է Թբիլիսիում, 28-ը՝ Քութայսիում, 24-ը՝ Բաթումիում, 8 փաստ՝ Ռուսթավիում:

Նշենք, որ օրենքի պահանջների կա-տարումը վերահսկելու նպատակով, երկ-րի ողջ տարածքով ստեղծվել են 10 շար-ժական խմբեր, որոնցից հինգը գործում են մայրաքաղաքում, երկուական՝ Քութայ-սիում եւ Բաթումիում եւ մեկ խումբ՝ Ռուս-թավիում:

Խորագրի նյութերը պատրաստեց ԱՐԵՎԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆԸ

ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ԿԱՆԻՑԵՑ ՀՐԱԶՆԻ ԵՎ ԶԻՆԱՄԹԵՐԻ ՆԵՐԿՐՄԱՆ ՓՈՐՁԸ

«Վալե» եւ «Սադայլո» ավտոճանապար-հային մաքսային անցակետերում ֆինանսնե-րի նախարարության եկամուտների ծառայու-թյան մաքսային դեպարտամենտի մաքսային աշխատակիցները, կասկածի հիման վրա, խու-զարկեցին օտարերկրյա քաղաքացիներին պատկանող տրանսպորտային միջոցը: Խու-զարկության արդյունքում հայտնաբերվել են տարբեր տեսակի իրազեն եւ զինամթերք, մաս-

նավորապես ատրճա-նակ փամփուշտներով, օդանդիչ (պենեմատիկ) զենք, նաեւ ավտոմատ զենքի 30 փամփուշտ: Վերոնշյալ իրավախախտումը թույլ տված քաղաքացիների գործը, հետագա արձագանք-ման համար, առաքվել է Վրաստանի ներքին գործերի նախարարություն:




ՆՈՐ ՀԱՄԱՋԳԵՍ ՍԱՔՍԱՅԻՆ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Վրաստանի ֆինանսների նախարարության եկամուտնե-րի ծառայությունում իրականացվող բարեփոխումների շը-ջանակներում, մաքսային դեպարտամենտի մաքսային բո-լոր անցակետերում եւ ձեւակերպման տնտեսական գոտի-ներում, մաքսային աշխատակիցներին փոխանցվեց Վրաս-տանում թողարկված, բարձրորակ կտավից պատրաստված Նոր համազգեստ եւ հատուկ հանդերձանք:


ժամանակակից դիզայնով կիսավերարկու-ները, անձրեւանոցներն ու ձմեռային կոշիկնե-րը պատրաստվել են հատուկ մաքսային աշ-խատակիցների համար եւ լրիվությամբ համա-պատասխանում են միջազգային չափորոշիչ-ներին: Ելնելով մաքսային աշխատակիցների աշխատակարգից եւ տարբեր վայրերի բնակ-լիմայական բարդ պայմաններից՝ ծառայողա-կան համազգեստը համապատասխանում է ինչ-պես հարմարավետության, այնպես էլ՝ ջերմա-կարգավորման պարտադիր պահանջներին եւ որակին:

Հատկանշական է, որ 2023 թվականից եկա-




ԲԱՅԱՐԱՅՑՎԵԼ Ե ԱՌԱՆՑ ԱՔՑԻԶԻ ԾԽԱԽՈՏԻ ՓՈՒԱԴՐՄԱՆ 96 ՓԱՍՏ

Օգոստոսի 1-31-ը Վրաստանի ֆինանսների նախա-րարության եկամուտների ծառայության հարկային մո-նիտորինգի դեպարտամենտի աշխատակիցները, երկ-րի տարածքով անցկացրած միջոցառումների արդյուն-քում, բացահայտել են 9393 տուփ (այդ թվում՝ 240 այ-քոս) առանց արժեքի ծխախոտի ապօրինի պահպան-ման-փոխադրման դեպք:



ՀԱՅՏՆԱԲԵՐՎԵԼ Ե ՄԵԾ ՔԱՆԱԿՈՒԹՅԱՄԲ ԶԻԱՅՏԱԳՐՎԱԾ ԾԽԱԽՈՏ

Վերջին մեկ ամսվա ընթացքում, «Սարփի», «Գու-զուբի» եւ «Թբիլիսիի օդանավակայան» մաքսային անցակետերում, կանխվել են մեծ քանակությամբ չհայտագրված ծխախոտ երկրի տարածք ներկրելու փորձեր:



Վրաստանի ֆինանսների նա-խարարության եկամուտների ծա-ռայության մաքսային աշխատա-կիցները, տարբեր երկրների քաղա-քացիների ինչպես անձնական խու-զարկության, այնպես էլ՝ ցրանց պատկանող ավտոտրանսպորտա-յին միջոցների խուզարկության ժա-մանակ, հայտնաբերել են ընդհա-նուր առմամբ 32 780 գլանակ չհայ-տագրված ծխախոտ եւ 104 հատ էլեկտրոնային ծխախոտ:

րության համա-ձայն, իրավա-խախտում թույլ տված անձանցից չհայտագրված ապրանքը բռնագրավվել է եւ յու-րաքանչյուրի համար սահմանվել 1000 լարիի տուգանք, իսկ 7 իրա-վախախտման փաստով, օրենքի խախտման երկրորդ փաստի վավերացման պատճառով, չհայ-տագրված ապրանքի բռնագրավու-մից բացի, սահմանվել է տուգանք 3000 լարիի չափով:

Վրաստանում գործող օրենսդ-րության համա-ձայն, իրավա-խախտում թույլ տված անձանցից չհայտագրված ապրանքը բռնագրավվել է եւ յու-րաքանչյուրի համար սահմանվել 1000 լարիի տուգանք, իսկ 7 իրա-վախախտման փաստով, օրենքի խախտման երկրորդ փաստի վավերացման պատճառով, չհայ-տագրված ապրանքի բռնագրավու-մից բացի, սահմանվել է տուգանք 3000 լարիի չափով: